ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<01>> ---------հուլիսի---------2026թ. N ՄՈ 363 -Ա

ք. Արմավիր

«ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԵՐԻՑՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Անահիտ Երիցյանի 2026 թվականի հունիսի 29-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ

1. «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Երիցյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդը 2026 թվականի հուլիսի 6-ից օգոստոսի 7-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Անահիտ Երիցյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Ռուստամ Պետրոսյանին:
3. «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Ռուստամ Պետրոսյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 6-ից օգոստոսի 7-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Անահիտ Երիցյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 10-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 25.09.2025 **ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ**